ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/121/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 22 մայիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի մայիսի 22-ին քննելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու անդամ Լուսինե Սուրիկի Թադևոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/121/2024 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2022 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Կուսակցության տարեկան հաշվետվություն) ստուգման

արդյունքում վերհանված տվյալները, իրականացրել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու անդամ Լուսինե Սուրիկի Թադևոսյանի՝ 2022 թվականի մայիսի 18-ին ներկայացված 2021 թվականի պաշտոնական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագրում, 2022 թվականի հունիսի 9-ին ներկայացված 2021 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում և 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացված 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում հայտարարագրված տվյալների ստուգում, որի արդյունքում պարզել է.

1.2 Լուսինե Սուրիկի Թադևոսյանի կողմից 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացված 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) «Ա. Ընդհանուր տվյալներ» բաժնի «Ա.2 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» և «Ա.3 Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» ենթաբաժիններում տվյալներ հայտարարագրված չեն, մինչդեռ ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2000 թվականի օգոստոսի 22-ին կատարվել է Լուսինե Սուրիկի Թադևոսյանի և Արամ Աթոյանի ամուսնության պետական գրանցում:

1.3 Ի պատասխան Հանձնաժողովի թիվ 01/1224/2-2024 գրության՝ 2024 թվականի ապրիլի 23-ին վարույթի մասնակցի կողմից մուտքագրված թիվ Մ-1868-2024 գրությամբ ներկայացվել է պարզաբանում:

1.4 Հանձնաժողովը, Լուսինե Սուրիկի Թադևոսյանի Հայտարարագրում չներկայացված տվյալների հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնելու որոշման կապակցությամբ 2024 թվականի մայիսի 14-ին Լուսինե Սուրիկի Թադևոսյանին հասցեագրել է թիվ 01/1373-2024 ծանուցումը՝ այն ստանալուց հետո՝ երրորդ օրը, ժամը՝ 11:00-ին հրավիրելով Հանձնաժողով վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ հինգերորդ օրը,

ժամը՝ 11:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու:

1.5 2024 թվականի մայիսի 20-ին վարույթի մասնակցի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/135/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.6 2024 թվականի մայիսի 22-ին գործի քննությունն իրականացվել է պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ, գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացվել:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2024 թվականի ապրիլի 23-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-1868-2024 գրությամբ վարույթի մասնակիցը ներկայացրել է պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում) առ այն, որ հայտարարագիրը լրացնելու պահին

չէր կարող դիմել ամուսնուն՝ վերջինիս անձնական տվյալները հայտարարագրում ներկայացնելու համար:

Միաժամանակ, նշել է նաև, որ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք իր հետ համատեղ չեն բնակվում, ուստի տվյալները նույպես չեն նշվել:

2024 թվականի մայիսի 20-ին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/135/24 արձանագրության կազմման ժամանակ վարույթի մասնակիցը ներկայացրել է բացատրություններ առ այն, որ հայտարարագիրը լրացնելու պահին

ինչի պատճառով չի կարողացել տվյալներ պահանջել

նրանից: Այն հարցին, թե հայտարարագրով պահանջված տվյալներին արդյոք չէր տիրապետում պատասխանել է, որ կարծել է, թե պարտավոր է ներկայացնել իր ամուսնու գույքի և եկամուտների վերաբերյալ ամբողջական տվյալներ, որոնց ինքը չի տիրապետել:

Նաև հավելել է, որ եթե իմանար, որ միայն ընդհանուր բնույթի տվյալներ պետք է ներկայացներ, անպայման կներկայացներ, քանի որ որևէ դիտավորություն չի ունեցել տվյալները թաքցնելու: Միաժամանակ, նշել է, որ իր խնամքի տակ ունի երկու երեխա, որոնք ուսանող են և չեն աշխատում, ուստի խնդրել է որոշում կայացնելիս հաշվի առնել նաև այդ հանգամանքը: Անդրադառնալով Կուսակցությանը նվիրատվություն կատարելու փաստին՝ նշել է, որ ինքն երբևէ Կուսակցությանը նվիրատվություն չի կատարել և տեղյակ չէ, թե ինչու է իր անունը հայտնվել Կուսակցության տարեկան հաշվետվությունում, միաժամանակ, նման չափի գումար չէր էլ կարող կատարել իր ունեցած եկամուտներով:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/121/2024 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Լուսինե Սուրիկի Թադևոսյանի կողմից Հայտարարագրի «Ա. Ընդհանուր տվյալներ» բաժնի «Ա.2 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» և «Ա.3 Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» ենթաբաժիններում տվյալներ հայտարարագրված չեն:

3.2 ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2000 թվականի օգոստոսի 22-ին կատարվել է Լուսինե Սուրիկի Թադևոսյանի և Արամ Աթոյանի ամուսնության պետական գրանցում:

3.3 ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տվյալների շտեմարանում առկա չէ տեղեկատվություն Լուսինե

Սուրիկի Թադևոսյանի և Արամ Աթոյանի ամուսնալուծության պետական գրանցման վերաբերյալ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու անդամ Լուսինե Սուրիկի Թադևոսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 39-րդ հոդվածի (Հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալները սահմանող) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը):

4.3 Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ:

4.4 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար **անձի ամուսինը**, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը:

4.5 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները: Մասնավորապես, հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալների դեպքում՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը) և այլ տեղեկություններ:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի

պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու անդամ Լուսինե Սուրիկի Թադևոսյանը Հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական տվյալը.

Հայտարարագրի «Ա. Ընդհանուր տվյալներ» բաժնի «Ա.2 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» և «Ա.3 Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» ենթաբաժիններում տվյալներ հայտարարագրված չեն վերջինիս ամուսնու՝ Արամ Աթոյանի վերաբերյալ:

Հաշվի առնելով արձանագրված իրավախախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Լուսինե Թադևոսյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Անդրադառնալով վարույթի մասնակցի դիրքորոշմանն առ այն, որ թեև իր և ամուսնու ամուսնալուծությունը գրանցված չէ, այնուամենայնիվ իրենք փաստացի համատեղ չեն բնակվում, որի հետևանքով էլ վերջինս հնարավորություն չի ունեցել ներկայացնելու պահանջվող տեղեկությունները՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն իրողությունը, որ օրենսդիրը սահմանել է պարտադիր ներկայացման ենթակա տվյալների

շրջանակը հաշվետու ժամանակահատվածի համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրում թվարկված տվյալների ներկայացման միջոցով սպառիչ և ամբողջական կերպով արտացոլվում են ինչպես հայտարարատու պաշտոնատար անձի, այնպես էլ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ անհրաժեշտ տվյալները: Մասնավորապես, Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է այն անձանց շրջանակը, որոնք հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ չեն բնակվում, սակայն պաշտոնատար անձը կրում է վերջիններիս վերաբերյալ իր կողմից ներկայացվող հայտարարագրում տվյալներ ներկայացնելու պարտականություն: Նշված անձանց շրջանակում ընդգրկված է նաև հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը:

Վերոնշյալ դրույթից հետևում է, որ օրենսդիրը էական է համարում ոչ թե համատեղ բնակվելու փաստը, այլ ամուսնության՝ հաշվետու ժամանակահատվածում գրանցված ակտի առկայության վերաբերյալ փաստը: Բացի այդ, սույն վարույթի շրջանակներում Լուսինե Թադևոսյանի կողմից որևէ հիմնավորող փաստաթուղթ չի ներկայացվել, որը կհավաստեր, որ և նման պարագայում Հանձնաժողովը հիմք է ընդունում իրավասու պետական մարմնից ստացված տեղեկատվությունն առ այն, որ Արամ Աթոյանը փաստացի հանդիսանում է Լուսինե Թադևոսյանի ամուսինը, և առկա չէ գրանցված ամուսնալուծության վերաբերյալ որևէ ապացույց:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ սույն գործով խախտումը կատարվել է այնպիսի փաստական հանգամանքների համադրությամբ, որոնք նույնական չեն Հանձնաժողովի կողմից նախորդիվ կայացված որևէ վարչական ակտում առկա փաստական հանգամանքների հետ, մասնավորապես, սույն գործով էական հանգամանք է այն, որ Լուսինե Թադևոսյանի ամուսնու վերաբերյալ տվյալներն առհասարակ բացակայում են վերջինիս կողմից ներկայացված Հայտարարագրի «Ա. Ընդհանուր տվյալներ» բաժնում: Մինչդեռ, բացառապես հայտարարատու պաշտոնատար անձի կողմից նշված բաժնում տվյալների ներկայացման միջոցով են Օրենքի 39-րդ հոդվածում թվարկված անձինք հայտարարագրի լրացման էլեկտրոնային համակարգում նույնականացվում և կախված հայտարարատու պաշտոնատար անձի հետ կապի բնույթից, տարիքից և օրենքով

սահմանված այլ առանձնահատկություններից՝ ձեռք բերում հայտարարագիր ներկայացնելու ինքնուրույն պարտականություն կրող անձի կարգավիճակ:

Տվյալ պարագայում, Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ Լուսինե Թադևոսյանի կողմից նշված բաժնում տվյալների չհայտարարագրման փաստով պայմանավորված՝ վերջինիս ամուսնու վերաբերյալ տվյալները դուրս են մնում Հանձնաժողովի տեսադաշտից և հետևաբար վարույթի մասնակցի ամուսնուն առնչվող բոլոր տվյալները Հանձնաժողովի համար դառնում են անվերահսկելի, քանի որ որպես պարտադիր հայտարարագրման ենթակա առանձին և ինքնուրույն տվյալներ Հանձնաժողովի համար՝ չներկայացման պարագայում անհասանելի են, ինչպես նաև ստուգման ոչ ենթակա:

Անդրադառնալով վարույթի մասնակցի պարզաբանմանն առ այն, որ ինքըն երբևէ Կուսակցությանը նվիրատվություն չի կատարել և տեղյակ չէ, թե ինչու է իր անունը հայտնվել Կուսակցության տարեկան հաշվետվությունում, Հանձնաժողովն արձանագրում է, որ վերոնշյալ հարցի քննարկումը դուրս է սույն վարույթի առարկայի շրջանակից և անհրաժեշտ է համարում լրացուցիչ ուսումնասիրության կատարման արդյունքում անդրադառնալ վերոնշյալի առնչությամբ իրավասու մարմնին հաղորդում ներկայացնելու հարցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի մասնակցի՝ Պարզաբանմամբ ներկայացված դիրքորոշման համաձայն՝ վերջինս Կուսակցությանը նվիրատվություն չի կատարել և նման չափի գումար չէր էլ կարող կատարել իր ունեցած եկամուտներով, սույն գործով վարույթի մասնակցի ամուսնու վերաբերյալ ճիշտ և ամբողջական տվյալների առկայությունն առավել էական նշանակություն ունի վերջինիս ամուսնու կողմից իր ստացված եկամուտներից նշված գումարի չափով նվիրատվությունը կատարելու հնարավորության համատեքստում: Այս առումով, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ այս կերպ գործնականում խաթարվում է հանրային հաշվետվողականությունը, հայտարարագրված տվյալների ամբողջականության համադրման հնարավորությունը՝ պաշտոնատար անձի կողմից օրինական համարվող ծագման աղբյուրից ստացված եկամուտներից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու հնարավորության բացահայտման առումով: Ավելին՝ տվյալ պարագայում Հայտարարագրում ամուսնու վերաբերյալ տվյալների չներկայացման արդյունքում առհասարակ բացակայել է

պաշտոնատար անձի ամուսնու կողմից իր ստացված եկամուտներից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու փաստը բացահայտելու հնարավորությունը: Այսպիսով, ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ որպես ընտանիքի անդամ անձի տվյալը չներկայացնելու դեպքում, ընտանիքի անդամը փաստացի հայտարարագիր չի ներկայացնում և Հանձնաժողովը զրկվում է տվյալ անձի և իր՝ օրենքի համատեքստում ընտանիքի անդամների ընդհանուր գույքային դրության վերաբերյալ համապարփակ վերլուծություն կատարելու հնարավորությունից:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Հայտարարագրում ներկայացված է ոչ ամբողջական տվյալ:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու անդամ Լուսինե Սուրիկի Թադևոսյանը նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Սուրիկի Թադևոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Լուսինե Սուրիկի Թադևոսյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ